

բազային՝ Հայաստան դարձեալ կրկնակի թոյլ պիտի լինի մէկի կամ միւսի հանդէպ, որով եւ՝ միշտ անվտանգ: Բայց նրանք գիտնալու են նաեւ, որ այդ եղանակով միայն իսկապէս որ պիտի հնարաւոր դարձնեն Անդրկովկասեան ժողովուրդների բաղձալի միութիւնը: Եւ որովհետեւ այնտեղ ստեղծուած ներկայ — անարդար — վիճակը նախ եւ առջ Ռուսաստանի շիւ քաղաքականութեան հետեւանքն է, ապա ուրեմն ու մանաւանդ նրան պիտի ուղղուին մեր պահանջները:

Գրախ ուժերի վրայ յոյս դնելու չեն ո՛չ Հայաստան, ո՛չ էլ Անդրկովկասի միւս ժողովուրդները: Ամէն մի արտաքին ուժ՝ միայն դժտել, իրար հետ թշնամացնել կարող է մեզ: Լինի Ռուսիան, Անգլիան թէ Թուրքիան: Գրանով մէկտեղ՝ հայ-ազգային քաղաքականութիւնը երբեք պիտի չզաղարի հետապնդել Տաճկաստանի հետ եւս այս կամ այն դեմնի վրայ համաձայնութեան դալու միտքը: Յաւիտենական թշնամութիւնից տուժողը միշտ էլ թոյլ կողմն է: Ամէն մի ազգ աշխատում է անվնաս դարձնել այն ձեռքը, որից որ նա ամէնից շատ վնաս է սպասում: Եւ դրա միջոցը մէկ հատիկ չէ երբեք, մանաւանդ որ շատ է ակնբախ նրա թուլութիւնը: Աններելի է ճակատագրապաշտ լինել առհասարակ, բայց մանաւանդ՝ քաղաքական եւ հանրային խնդիրներում. այլապէս լքե՛լ պէտք է ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը ու հեռանալ կեանքից: Համաթրքական — եւ ո՛չ թէ համաթուրանական — ծրագրերների գոյութիւնը չտեսնել կարելի չէ, ի հարկէ: Բայց պէտք չէ նաեւ՝ այսօր-վաղուան համար արդէն կախուած տեսնել նրան, որպէս մի դամոկլեան սուր, հայութեան եւ Հայաստանի գլխին: Գրանով մէկտեղ՝ դալիք դէպքերը նախատեսելու է եւ միջոցներ խորհելու: Բազմազան են դրանք: Փորձել պէտք է բոլորը. խոհեմութիւն չէ՝ փրկութիւնը մէկի մէջ միայն տեսնել, երբ մանաւանդ փորձով դիտես նրա թուլութիւնը: Եւ ոչ էլ արմատացնել պէտք է այն հասկացողութիւնը մեր մէջ, թէ թրքութեան հատուածների ազգային միութիւնը իրականանալու պարագային ճակատագրապէս հայութեան եւ Հայաստանի անկենդան մարմնի վրայով պիտի կատարուի այդ: Գրա-

նով մենք իսկ թուլացնում ենք մեր սեփական դիրքերը — թէ՛ հողերանորէն եւ թէ՛ քաղաքականորէն: Քարտէսի ուշադիր ընթերցումը պիտի ցոյց տայ նաեւ ուրիշ ուղիներ: Բոլոր մարդիկ եւ ազգերն աշխատում են պղտոր հեղեղներին ուրիշ ընթացք տալ, այլ կողմ շարժել: Եւ դա բնաւ անհնար բան չէ: Թուրքիոյ համար դժուար բան պիտի չլինէր՝ այդ իսկ տեսակէտից իրեն համար ամենէն անվնաս ուղղութեամբ բաւարարութիւն տալ մեզ: Թերեւս այդ կէտում մինչեւ իսկ մեր շահերը ամենից պակաս հեռաւորութիւն ունենային իրարուց:

Եւ սակայն, առաջինը եւ գլխաւորը դէժ տեսական բեկումն է, հայ-թուրք հաշտութիւնը առհասարակ հնարաւոր դարձնելու միջոցը: Բոլոր ազգերի պատմութիւնը այդ է ուսուցանում, ինչո՞ւ մենք լինենք ճակատագրապաշտ, մանաւանդ որ սկզբից իսկ համոզուած պիտի լինենք, որ նրա մէկ նոր դոհն ենք լինելու, ժամանակին դարման չխորհնեք: Բոլոր պարագաներում՝ մոռնալու չենք երբեք, որ պատմութիւնը — հէնց մեր ազգի պատմութիւնը — մեզ դրկից եւ դրացի է դարձրել որոշ ժողովուրդների: Իսկ վա՛յ դրկիցներին, եթէ նրանք մշտապէս անհաշտ են, վա՛յ մանաւանդ՝ թոյլ են: Ամենազօրաւոր, անզամ ամենամանկեղծ դաշնակիցը (որ չկայ, աւա՛ղ), անզօր է օգնութեան հասնել իր թոյլ բարեկամին, եթէ հեռու է նա, քան որ դրացի թշնամին վնաս տալ կարող է, անզամ եթէ նա այնչափ թոյլ է: Անգլիական նաւերը հայկական լեռները բարձրանալ չեն կարողանում. այդ մենք քաջ ուսած ենք: Գիտենք նաեւ, որ նրանք մազի չափ անզամ օգուտ չեն մեզ, երբ մինչեւ իսկ Բոսֆորի ջրերում են խարսխած: Անձանօթ չէ նաեւ այն, թէ ուսական բանակները ինչպիսի դիւրութեամբ որ մաղլցիլ դիտեն գէպիտ հայկական բարձրաւանդակը, նոյնպիսի դիւրութեամբ էլ վար իջնել դիտեն — սրտի հանգստութեամբ մոխրի վրայ կանգնեցնելով մեր բազմութիւններն ու գաւառները: Այն եւս յայտնի է մեզ ամէնքիս, թէ ի՛նչպէս նոյն այդ ուսական ուժերը աքացել միայն սորված են